



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ, 2025

ՏԵՐՈՒՍԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպուրթին Հօր Յիսուս, քուր ինձ իմասպուրթին վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից, մարդասիրութեամբդ քո խրնայեա յանձինրս մեր. ստեղծիչ կենդանեաց եւ Հանգուցիչ նրնջեցելոց:

ԱՊՈԹՔ

Քեզի կը դիմենք, ով Տէր, արարիչ երկնքի եւ երկրի, Քու տէրու-թիւնդ եւ թագաւորութիւնդ որ կը տարածուի բոլորին վրայ, շնորհէ որ միշտ ակնածանով փութանք Քեզ պաշտելու, ամբողջ սրտով ու մտքով սիրենք Քեզ, եւ մեր ամբողջ գորութեամբ նուիրուինք Քու պատուիրան-ներուդ գործադրութեան: Մեր ձեռքերը Քեզի բարձրացնենք՝ սրբութեամբ, առանց բարկութեան եւ երկմտութեան, արժանանանք Քու շնորհքիդ եւ ողորմութեանդ, եւ մեր առաքինի գործերուն մէջ յաջողու-թիւն գտնենք: Որովհետեւ Դուն ես մեր կեանքին Տէրը, ողորմած Աստ-ուած, եւ Քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՍ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստ-ուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 93

ՏԵՐԸ ԿԸ ԹԱԳԱՒՈՐԷ

**Տէրը կը թագաւորէ իր ամբողջ փառքով,
ամբողջապէս զգեստաւորուած եւ զօրութեամբ
գօտելորուած:**

Ինք երկրագունդը հաստատեց այնպէս՝ որ չսասանի բնաւ:

**Քու աթոռդ անխախտելի, սկիզբէն,
որովհետեւ Դուն ժամանակներէն առաջ ես:**

**Թէպէտ ազգերը խռոված գետերու պէս բարձրացան, Տէր,
խռոված գետերու պէս իրենց ձայնը բարձրացուցին**

եւ իրենց ընթացքով Քեզի դէմ ելան,

սակայն ովկիանոսներու շառաչէն

եւ ծովու ահարկու փոթորիկներէն

աւելի ահեղ ես Դուն, Տէր, Քու բարձունքիդ մէջ:

Պատուիրաններդ ամբողջովին վստահելի են, Տէր:

Սրբութիւնը Քու տանարիդ կը վայելէ յաւիտեան:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՍԱՂՄՈՍ 93

ՏԵՐԸ ԿԸ ԹԱԳԱՒՈՐԷ

Այսօրուան Սաղմոսը, 93-րդ, թագաւորական Սաղմոսներու դասակարգին կը պատկանի: Թագաւորական Սաղմոսներ, որ կը հռչակեն Աստուծոյ թագաւորութիւնը համայն փիեզերքին վրայ: Նախ պարմական ակնարկ մը ընենք Իսրայէլի ժողովուրդին հետ կապուած: Երբ Աստուծոյ դուրս կը բերէ Իս-րայէլի ժողովուրդը Եգիպտոսի ստրկութենէն, տալով պարտիքանները, կ'ուզէ դաստիարակել ժողովուրդը, որպէսզի անոնք դաստիարակուին ապրիլ աստուածապետական դրութեամբ, այսինքն՝ Աստուծոյ պարտիքաններով, Աստուծոյ ունենալով որպէս իրենց թագաւորը: Բայց փոխանակ ապրելու աստուածապետական դրութեամբ, ընդհակառակը անոնք շեղեցան այդ ընթացքէն, եւ տեսնելով իրենց շուրջի ցեղախումբերը, եւ անոնց թագաւորները, ուզեցին իրենց համար թագաւոր ունենալ, եւ իրենց առաջին թագաւորը պիտի ըլլար Սաուլը: Այս մտածումներով, այս Սաղմոսը կը սկսի հետեւեալ հասարակութեամբ. “Տէրը կը թագաւորէ իր ամբողջ փառքով”: Այս հասարակութեամբ կու գայ ըսելու, որքան ալ անցեալին կամ այսօր կան տարբեր տեսակի թագաւորութիւններ, կայսրութիւններ, կառավարման եղանակներ՝ Սաղմոսը կու գայ ըսելու իսկական թագաւորը որ կը թագաւորէ Տէրն է: Տիրոջ թագաւորութիւնը իր ամբողջ փառքով, զգեստաւորուած եւ զօրութեամբ գօտելորուած, որոնք խորհրդանշէն աստուածային հեղի-նակութեան եւ զօրութեան: Այլապէս բնականէ դուրս պիտի ըլլայ պատկերացնել Աստուծոյ զգեստաւորութեամբ: Ուրիշ բան, երբ կը համեմատենք Թագաւոր լեռան վրայ Քրիստոսի այլակերպութիւնը, երբ Իր հետ եղող աշակերտները Անոր փառքը տեսան, աստուածային փառքը իր զօրութեամբ եւ հեղինակութեամբ: Այնպէս ինչպէս Տէրը Իր զօրութեամբ եւ հեղինակութեամբ ամենագոր եւ անսասանելի, նոյնպէս նաեւ Իր սրբազանութիւնը անսասանելի, մինչեւ որ Ինք ուզէ որ սասանի: Երկրորդ հասարակութեամբ որ կ'ընէ, “Քու աթոռդ անխախտելի է եւ սկիզբէն է”, որովհետեւ Դուն, ով Տէր անխախտելի ես ու սկիզբէն: Այլ խօսքով, թագաւորութիւնդ ժամանակին հետ կապուած չէ, ժամանակէն դուրս է: Յաւիտեանական է եւ ոչ թէ ժամանակաւոր: Ահա թէ ինչու այդ զանազանութիւնը կը տրուի երկինքի թագաւորութիւն եւ երկրի թագաւորութիւն, անժամանակ եւ ժամանակաւոր յարկութեամբ: Յաջորդ կէտը ցոյց կու տայ, թէ որքան ալ երկրաւոր թագաւորութիւններն ու թագաւորները խռոված գետերու պէս բարձրանան, իրենց ձայնը

բարձրացնեն, եւ իրենց ընթացքով Աստուծոյ դէմ ելլեն, որովհետեւ խորքին մէջ երկրաւոր թագաւորութիւններն ու թագաւորները ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ ներկայացուցիչները երկրի վրայ, բայց արի ու քեւ, որ անոնց ընթացքը, ծրագիրը ուրիշ բան չէ եթէ ոչ իրենց արարքով Աստուծոյ դէմ ելլելու: Ուստի, որքան ալ անոնց ձայնը բարձր ըլլայ, սակայն ոչ որ կրնայ դիմանալ ու փոկալ Աստուծոյ դիմաց, որովհետեւ Աստուծոյ ներկայութիւնը ովկիանոսներու շառաչէն եւ ծովուն ահարկու փոթորիկներէն աւելի ահեղ է եւ կը սարսափեցնէ: Այսպէղ ազգերը կը նմանցնէ խռոված գետերու, ուր կարծէք յաճախ այնպէս կը թուի որ ով կրնայ պարտութեան մարմնել այսպիսի հզօր պետութիւն մը: Յիշենք Դանիէլի մարգարէութեան մէջ արձանագրուած Նաբուգոդոնոսոր թագաւորին քեւած երազը: Հակառակ իր այդ գօրութեան ու ահաւորութեան, որպէս խռոված գետ եկաւ ու յարձակեցաւ Երուսաղէմի վրայ, աւերելով քաղաքը, կոտորելով ժողովուրդին մէկ մասը, իսկ միւս մասը գերի քանդելով դէպի Բաբելոն, չնայած այս բոլորը Աստուծոյ ծրագրին մաս կը կազմէր դաստիարակելու համար Իսրայէլի ժողովուրդը, սակայն Նաբուգոդոնոսոր իր սրտին մէջ հպարտացաւ, եւ ահա երազ մը քեւաւ, որուն իմաստը յետոյ Դանիէլ մարգարէն բացատրեց ըսելով, որ Նաբուգոդոնոսորի թագաւորութիւնը պիտի կործանի: Որքան ալ ովկիանոսի շառաչը զօրեղ է, ծովուն փոթորիկները ահարկու, սակայն Տէրը աւելի ահեղ է: Այդ բոլորի մասին Աստուծոյ պարտիքանները կու գան քաջութիւնը, ուստի այդ պարտիքանները ամբողջութեամբ վարսեցնել են: Ահա թէ ինչու Աստուծոյ քան կը վայելէ սրբութիւնը, որովհետեւ Աստուծոյ որ Սուրբ է, ամէն ինչ որ Իրեն հետ կապ ունի այդ սրբութիւնը կը փոխանցուի: Իր ներկայութիւնը սրբութիւն է, Աստուծոյ հեղինակութիւնը սրբութիւն է, այդ սրբութիւնը կապուած է եւ Աստուծոյ եւ Աստուծոյ գործին: Այդ սրբութիւնը եւ երկինքի մէջ եւ երկրի վրայ: Ինչպէս որ երկինքի մէջ Աստուծոյ փառքը կը պարմեն ու կը գովերգեն ըսելով. “Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր գօրութեանց լի են երկինք եւ երկիր փառք քո”: Ուստի, այս բոլորը ի մտի ունենալով, կ’ըսենք.- 1. Տէրը ինքն է թագաւորը: Ահա թագաւորին ու թագաւորութեան սպասումովն է որ կ’ապրի ու պէք է ապրի եկեղեցին: Ահա թէ ինչու Ս. Պապարագի խորհուրդը կը սկսի այս բառերով. “Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ”: 2. Որքան ալ հզօր են, երկար կը տեսնեն, բայց այս Սաղմոսը կու գայ ըսելու, որ երկրաւոր թագաւորներն ու թագաւորութիւնները ժամանակաւոր են, շուրջով կը մարին: Այս ըսուածին վկան պարմութիւնը ինք, քանի-քանի թագաւորներ, թագաւորութիւններ եկած ու անցած են: Այո, երկար կը թուին յաճախ, անպարտելի կը թուին, բայց այսօրուան Սաղմոսը կու գայ ըսելու եւ ընդգծելու, թէ անոնք որքան ալ բարձր ըլլան իրենց ձայներով եւ գօրութեամբ, բայց Աստուծոյ Ինքն է թագաւորը: Իսկ այսօր-ուան Սաղմոսը մեզի կը փոխանցէ հետեւեալը, ինչ ալ ըլլան այսօրուան փրոդ պայմանները, մէկ բան որոշ է ու պէք է որոշ ըլլայ, որ Տէրն է Թագաւորը իր ամբողջ փառքով: Երկրորդ, որքան ալ կան այսօր մեծ պետութիւններ, իշխանութիւնները, բայց անոնք ժամանակաւորն են: Իսկ Աստուծոյ թագաւորութիւնը յաւիտենական: Ի վերջոյ, գալով սրբութեան, որ Աստուծոյ քանարին կը վայելէ, Պօղոս Առաքեալ Կորնթացիներուն նամակին մէջ կը գրէ, “Դուք էք Աստուծոյ քանարը, ուստի այդ քանարը մի պղծէք, այլ՝ սուրբ պահեցէք”:

**Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**